ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄՈՒՄ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՆՎԻՐՎԱԾ ՎԱԶԳԵՆ Ա-ՈՒԱՋԻՆԻՆ

Վազգեն Ա երջանկահիշատակ կաթողիկոսի ծննդյան 100-ամյա հոբելյանի առիթով Գեղարքունյաց թեմը և մարզպետարանը կազմել են տոնակատարությունների և միջոցառումների համատեղ ծրագիր, որի շրջանակներում նախատեսված էր մարզի բոլոր հանրակրթական դպրոցներում անցկացնել շարադրության մրցույթ «Հայոց 130-րդ հայրապետը» խորագրով: Ամփոփելով արդյունքներն՝ ընտրվեցին 13 լավագույն աշխատանքները: Գեղարքունյաց թեմի և մարզպետարանի նախաձեռնությամբ դեկտեմբերի 2-ին բոլոր մասնակիցները և դասավանդող ուսուցիչները հրավիրվեցին մարզկենտրոն՝ պարգևատրման: Մասնակիցները հավաքվեցին Գավառի առաջնորդանիստ Ս. Աստվածածին եկեղեցում, որտեղ առաջնորդ Սրբազան Հոր հանդիսապետությամբ կատարվեց աշակերտների մասնավոր օրհնության արարողություն: Այնուհետև Գավառի երաժշտական դպրոցում մշակութային ցերեկույթից հետո հաղթողները հանդիսավոր կերպով պարգևատրվեցին Գեղարքունիքի մարզպետի և թեմի առաջնորդի կողմից սահմանված պատվոգրերով և նվերներով:

Հանդիսություններին ներկա էին Գեղարքունիքի մարզպետ պրն Ն. Պողոսյանը, մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, թեմի հոգևոր սպասավորներ, երիտասարդաց միության անդամներ և բազում հավատավոր հայորդիք:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ